ՎԱՐԴԱՆ ԱՐՀՈՒՄԵԱՆ *)

Ղ. Ղ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

X

Յաջորդ տարի ամառուայ վերջերին Բաղդասարը յանկարծ ընկաւ տարօրինակ մելancողութեան մէջ։ Ասենք, առանց այն էլ մի շատ զուարճալի մարդ չէր, իսկ այժմ միանգամայն անտանելի դարձաւ։ Երեկոները տուն վերադառնալով, դարբասից մտած չըմտած՝ կանչում էր լեզդի Օսմանին և կոշտ ու կոպիտ յանդիմանում նրան առանց առիթի կամ ինքը յօրինելով որ և է առիթ։

Մտնելով սենեակ, նա արձակւում էր կնոջ վրայ դարձեալ երևակայական գանգատութիւնների պատճառով։ Հայհոյում էր նրան այնպէս, որպէս երբէք չէր հայհոյել, երբեմն մերձենալով նրա եօթերորդ աստիճանի ազգականների պատուին կամ քամուն տալով նրա նախահայրերի ոսկորների փոշին։ Այնուհետև անտվար շտապով, շրթունքներն ու մատները այրելով, պնակից խմում էր մի բաժակ թէյ և իսկոյն առանձնանում։ Հոբս սենեակներից մէկում, մի հատիկ մոմի աղօտ լուսոյ ներքոյ համարակալի վրայ ինչ-որ հաշիւներ էր անում, մտածում, փընթփընթում, հառաչում, ձեռով ճակատը տրորում, ատամներով բեղերը կրծոտում։ Երբեմն յանկարծ ոտքի էր կանգնում ու արագ-արագ խոշոր քայլերով անցուդարձ անում, դրդռուած ողբերգակի

*) «Լուսոյ» 1902 № 1.

պէս, ձեռներով օդի մէջ ամենատարօրինակ շարժումներ անելով։ Այդ բոպէներին նրա բերանից դուրս էին թռչում այնպիսի ինքնատիպ յիշողներ, որոնց նմանը հազիւ թէ Զիլզիլ քաղաքի բնակիչները լսած լինէին իրանց կեանքում։ Թէ ումն էր այսպէս մկրտում և ինչու — միայն ինքը գիտէր։ Նրա շանթակիր հայեացքն անցնում էր մի պատից միւսը, բարձրանում էր առաստաղը, իջնում էր յատակը, կարծես, ամենուրեք որոնելով դառն մտածումների ու կատաղութեան շարժառիթ անձին, որը սակայն աներևոյթ դղակ էր հագել։

Գիւլիւմը մտածում էր մտածում — ամուսնու փոփոխութեան պատճառը չէր գտնում։ Նա հարցնում էր Վարդանին, բայց պատանին էլ ոչինչ չըգիտէր։ Մի օր նա փորձեց հարցնել Բաղդասարին, սակայն բերանը բաց արած չը բաց արած, փոշմանեց։ Բաղդասարը, ոտները յատակին զարկելով, ստիպեց նրան լռել։ Այն ժամանակ Գիւլիւմը գնաց իւր աղջկայ մօտ և խնդրեց, որ սա իւր ամուսնու միջոցով Բաղդասարի գործերի մասին որ և է տեղեկութիւն իմանայ։ Բայց այստեղից էլ Գիւլիւմը մի որոշ բան չիմացաւ։ Այն ինչ՝ Բաղդասարը քանի գնում այնքան անտանելի էր դառնում։ Այժմ նրա հետ ոչ մի բանի մասին խօսել չէր կարելի։ Նա կատաղում էր նոյն իսկ այն ժամանակ, երբ կինը առաւօտները հարցնում էր ճաշի համար ինչ կերակուր պատրաստի։ Բանն այնտեղ հասաւ, որ խեղճ կնոջ ամուր քայլուածքը, հառաչանքը և շշնջիւնն անգամ նրան գըրգռում էին։

Մի երեկոյ Բաղդասարը նոր էր վերադարձել խանութից, երբ շտապով ներս մտաւ Աբրահամ աղան։ Այդ մարդը երբէք առանց որևէ լուրջ պատճառի չէր գալիս նրա մօտ։ Իսկ այս անգամ նա, որ-

քան նկատեց Գիլիմը, յուզուած էր։ Նա իսկոյն Բաղդասարի հետ անցաւ միւս սենեակ և դռները ետևից ծածկեց։ Պարզ էր, որ այցելութեան նպատակը արտաքոյ կարգի էր։

Գիլիմը չըհամարձակուեց դռների ետևից ականջ դնել, բայց Վարդանը չըկարողացաւ զսպել իւր հետաքրքրութիւնը։ Այս տասներեք տարեկան պատանու գլուխն անհամեմատ աւելի էր զբաղուած հօր գործերով, քան կարելի էր երևակայել։

Սկզբում Բաղդասարն ու Աբրահամ աղան խօսում էին հանդարտ, այնպէս որ Վարդանը յոյսը կտրեց մի բան լսելու։ Բայց շուտով նրանց ձայները բարձրացան։ Այն ժամանակ փոքրիկ լրտեսը լսեց հետևեալը.

—Ես քեզ ասում եմ մանէթին երկու աբասին լաւ փող է, ստացիր ու ձայնդ քաշիր,—համոզում էր Աբրահամ աղան։

—Մանէթին չորս աբասի, իմացար, մի կոպէկ էլ պակաս չեմ վերցնի։

—Ա մարդ, չունիմ. չունիմ, չունիմ, լսում ես, թէ չէ։

—Ունիս ու շատ էլ լաւ ունիս։

—Դէ լաւ, ինչը շահի ստացիր։ Ստուած, երկինք, աւելի տալ չեմ կարող։

—Մանէթին չորս աբասի, չորս աբասի, հասկանում ես։

—Լաւ, որ իսկի մի կոպէկ էլ չըտամ, ինչ պիտի անես,—գոչեց Աբրահամ աղան այնպիսի դիւային ձայնով, որ նոյն իսկ Վարդանի մարմնով սարսուռ անցաւ։

—Ինչ հանեմ,—կրկնեց Բաղդասարը թոյլ ձայնով,—այ, այս մատներովս առաջ քեզ կըխեղդեմ, յետոյ ինձ.

—Դէհ, խեղդիր, պրծիր էլի, մի կոպէկ էլ չեմ տալու։

Քանի մի վայրկեան տիրեց լռութիւն։ Վարդանին թուաց, որ, իրաւ, հայրն արձակուեց Աբրահամ աղայի վրայ և խեղդում է նրան։ Նա դողաց ամբողջ մարմնով։

—Աբրահամ,—լսուեց, վերջապէս, Բաղդասարի ձայնը,—տուն մի քանդիր։

—Իմ տունը, որ քանդուում է, թող քոնն էլ քանդուի։

—Բաս որ այդպէս է, քեզ բանտ նստեցնելը մեղք չէ։

—Նստեցրու, ճարս ինչ, կընստեմ։

—Աբրահամ, մի արա այդ բանը։ վերև Աստուած կայ, կրակ կրթափի գլխիդ...

—Ես ոչ առաջինն եմ, ոչ վերջինը, ինձ նմանները շատ կան։

—Շրկան, Աստուած վկայ, շրկան, սկսողը դու ես։

—Մի երկարացնի, ուզում ես մանէթին ինը շահի։

—Չէ, չէ ու չէ։

—Մնաս բարով։

—Աբրահամ։

—Ցետոյ գլխիդ կրթակես ու վայ կրկանչես...

—Աբրահամ։

—Չեմ կարող, չեմ կարող, չեմ կարող։

—Դէ դուրս, դուրս անամօթ, աներես, աննամուս, շան կաթ կերած, դուրս, քո հօր ոսկորները... քո պապի միրուքը... քո բեղերը, փափաղը, դուրս, քո եօթը պորտի գերեզմանը...

Վարդանը մի ոստումով արդէն հեռացել էր դռներից և կուչ եկել սենեակի մի անկիւնում։

Դռները բացուեցին, Աբրահամը դուրս եկաւ։ Եթէ սենեակը լաւ լուսաւորուած լինէր, Վարդանը կըտեսնէր, որ իւր պատուելի կնքահօր դէմքի վրայ զոյն ասուած բանը չըկայ, որ նրա քնթի պնչերը դողում են, իսկ աչքերն արտայայտում սոսկալի վրճիռ։

Դժբաղդ երեկոյ, աւելի դժբաղդ գիշեր, որ Վարդանն անցկացրեց անքուն։ Նա շարունակ տրորւում էր անկողնում, հառաչում, ականջ դնում հօր սենեակի կողմ, ուսկից, սակայն, ձայն չէր լսւում։ Նա շատ բան էր հասկացել Աբրահամ աղայի ասածներից։ Պակասը լրացրել էր մայրը։ Նրա հայրը կորցնում է իւր ամբողջ զուտ դրամագլուխը, նա ինքը զրկւում է սեպհական փողերից և հաւասարւում աղքատ ընկերներին։ Այն ինչ, դեռ երէկ իրան համարում էր հարուստ։ Որքան պիտի ծիծաղեն ու ծաղրեն ընկերները և ինչպէս պիտի ուրախանայ այդ քոսոտ Մարտիրոսը։

Լուսադէմին միայն նա կարողացաւ քնել։ Բանալով աչքերը, նա իւր անկողնի մօտ տեսաւ հօրը։

—Աբրահամ աղան մեր փողերը կրտմ՝,—եղաւ նրա առաջին խօսքը։

Բաղդասարը գունատ էր, աչքերի կոպերն ուռել էին անքնութիւնից, դէմքն արտայայտում էր դառն տանջանք, կրծող վիշտ։ Նա տարօրինակ հայեացքով նայեց որդու երեսին և տարօրինակ եղանակով արտասանեց.

—Դայլ եղիր, դայլ, որ քեզ չուտեն...

Յետոյ բազմեց մինդարի վրայ և, ոտները ձգելով, աւելացրեց.

—Աբրահամը ոչ Աստուած ունի, ոչ հաւատ, ոչ օրէնք, ոչ ամօթ, ոչ նամուս։ Նա շուն է։ Եղբայրն

եղբօրն այնքան չէր հաւատում, ինչքան ես էի հաւատում նրան։

Նա լռեց, գլուխը թեքեց կրծքին և շարունակեց, կարծես, ինքն իւր հետ խօսելով.

—Վեց հազար հինգ հարիւր մանէթի տեղ երկու հազար ութ հարիւր մանէթ։ Ինչու, ինչ օրէնքով...

— Իմ փողերն էլ են կորչում,— հարցրեց Վարդանը։

— Քոնն էլ, իմն էլ, բոլոր ունեցած-չունեցածս։ Ստուած խելքս առաւ, պրծաւ։ Եթէ չոր տափին չը մնամ մեծ բան է, նա ինձ մանէթին երկու աբասի էլ չի տայ, դիտեմ, չի տայ...

Յանկարծ նա փոխուեց. խեղճութիւնը տեղի տուեց կատաղութեան։ Դղակը վերցրեց գլխից և, դարձելով յատակին, գոռաց.

—Վարդան, կոխ տուր գդակս, կոխ տուր։ Ես մարդ չեմ, որ չեմ կարողանում այդ անառակին խեղդել, շանսատակ անել...

Փոքր ինչ անցած նա բաւական հանգստացաւ և գնաց շուկայ և վերադարձաւ միայն իրիկնադէմին։ Աբրահամ աղան, այրուած խոցոտուած նրա երէկուայ վիրաւորանքից, մերժել էր բուբլուն քառասուն կոպէկ էլ տալու։ Նա ոչինչ չէր տալիս այժմ։

—Վարդան,—դարձաւ հայրը որդուն,—Վարդան, ականջ դիր ինձ։ Աստծուն է յայտնի, կրտանեմ այս ցաւը թէ չէ, բայց դու, եթէ իմ որդին ես, պիտի մտքումդ լաւ պահես երէկուայ լսածներդ։ Աշխարհում ոչ ոքի չը հաւատաս, ոչ ոքի մի կոպէկ չը տաս առանց գրաւի։ Կը մեծանաս, ունեցած-չունեցածս կը հաւաքես, քեզ համար գործ կըսկսես։ Դու պիտի հարստանաս։ Դիտես ինչու. որ վրէժս հանես այդ Աբրահամի որդիներից։ Թող նա ուտի փողերս, բայց թող նրա որդիները չոր տափին մնան։ Լսում ես,

դու պիտի նրանց թողնես քոր տալիս վրայ, մի կաթոր հացի կարօտ, որ դունէ դուն մեն դան, ողորմութիւն հաւաքեն, և դու փողոցներում նրանց տեսնելիս, թքես երեսներին... Լսում ես, դու պիտի կատարես հօրդ աւանդը, եթէ չկատարես, իմացիր, ոսկորներս գերեզմանից կանիծեն քեզ...

Դիւրումը ցնցուեց սարսափից։ Ամուսնու խօսքերի մէջ նա մութ կերպով նախատեսնում էր որդու ապագայ ճակատագիրը, կեանքի ծրագիրը, և նրա մեղմ, ներողասէր հոգին բողոքում էր հայրական այդ անողոք աւանդի դէմ։ Այդ աւանդ չէր, այլ անսիրտ բռնակալի դրած ծանր լուծ, դառն անէծք։ Նա նայեց որդու երեսին, որ իմանայ ինչ տպաւորութիւն են գործում նրա վրայ հօր խօսքերը։ Տանուտէրնք տարեկան պատանու դէմքը չէր կրում իւր հասակի անմեղութեան և ոչ մի նշոյլը այդ պահին։ Նա լուռ, ուշադիր լսում էր, աչքերը յառած հօր բերանին։ Եւ ոչ միայն լսում, այլ և իւրաքանչիւր բառն ամուր դրոշմում իւր յիշողութեան մէջ։

Փոքրիկ գլուխը ծնուելու օրից այնպէս չէր գործել, որպէս այժմ։ Նա ապագայի համար դարձնում էր վրիժառութեան սոսկալի մեքենայ։ Նրա սիրտը լեցուել էր թունաւոր կիրքով։ Հօր խօսքերը միայն սաստկացրին արդէն վառուած կրակը... Նա չոքեց հօր առջև, բռնեց նրա ձեռը, համբուրեց ու դրեց ճակատին։ Եւ այս որդիական հաւատարմութեան միտքը բառերով այս էր.

—Ես կը կատարեմ քո աւանդը...

XI

Սաֆիրիչ Պողոսի խանութը գտնւում էր Զիլգիլ քաղաքի կենտրոնում, մի կիսախարխուլ անկիւնում։

Այդ մի ոչ այնքան մեծ սենեակ էր, պատերն անպատատաս, կիսաւեր, օճառքը թանձր մուխից սևացած, յատակի աղիւսները ծածկուած ցեխի, մուրի և մուշտարիների մազերի զզուելի շաղախով։ Միակ լուսամտի ապակիները վաղուց էին փշրտուել, և այժմ նրանց փոխարինում էր իւղած թուղթը։ Ջախջախուած և ծայրէիծայր կարկատուած դուռը յիշեցնում էր յետին մուրացկանի ցնցոտին։

Այցելուների համար երեք պատերի երկայնութեամբ շինուած էր միապաղաղ փայտեայ նստարան, որ փոխարինում էր կապիտանի համար ամբողջ կահկարասին, եթէ չհաշուենք մի հնաղարեան բազկաթոռ երկու փութ ծանրութեամբ։ Այս հռանկիւնի կազմող նստարանի վրայ թաղի անդորձ կամ ծոյլ բնակիչները, որը ծալապատիկ նստած, որը ոտները ցած դցած, որը կրկղած, որը, վերջապէս, կողքի վրայ պառկած, քննում ու քննադատում էին քաղաքի խոշոր ու մանր դէպքերը ուստա Պողոսի մկրատի շրխչկոցի ներդաշնակութեամբ։ Դա մի ինքնատիպ պարլամենտ էր, ուր շատ անգամ շօշափւում էին բարձր նիւթեր—քաղաքական, պատերազմական, աւելի յաճախ՝ կրօնական։ Իսկ երբ խօսելու նիւթը սպառւում էր, պարլամենտի անդամները զուարճանում էին կատակներով, սրախօսութիւններով և փոխադարձ ծաղակոծութեամբ, մանուկների պէս միմեանց վրայ ջուր թափելով, իրարու բռթելով ու կմշտելով և հրա-հրա բարձրաձայն ծիծաղելով։

Օրը կիրակի էր, եղանակը ցուրտ, խոնաւ, անախորժ։ Սափրատան մէջտեղում, յատակի վրայ դրած մանղալում միսում էր ածուխը փայտի կտորների հետ, ծուխը դարձնելով ներկայ եղողների դէմքերին։ Տիրում էր առանձին կենդանութիւն, բոլորը յուզուած էին։ Լուրը բերել էր ինքը ուստա Պողոսը։

Այդ մի վերին աստիճանի խոշոր հետաքրքրական և մի և նոյն ժամանակ, անսպասելի նորութիւն էր։

Աբրահամ աղա Դալբաշեանը սնանկ—քաղաքի առաջին վաճառականը, ամենի նախանձի առարկան, յարգանքի կենտրոնը, հասարակութեան ամենամեծ սիւներից մէկը։ Ի՞նչպէս, այդ խելօք և զղջոյշ մարդը չըկարողացաւ իւր գործերը տանել։—Ոչ, ոչ, անհաւատալի է, անշուշտ մէջտեղ մի Լու կայ։

Եւ այդ Լու-ի մասին առաջին անգամ կասկած յայտնեց նախկին մանրավաճառ, այժմ անդործ Սաղաթէլը, որին «հարաշի տղայ» էին կոչում։

—Ուստա Պօղոս, — դարձաւ նա սափրիչին,— խօսքդ թամամցրու, տեսնենք։

Նա խորամանկ էր, զգում էր, որ ուստա Պօղոսն աւելի գիտէ, քան ցոյց է տալիս, միայն չի կամենում բոլորը միանգամից ասել։ Ամբողջ ժողովարանն իւր հայեացքը յառեց ուստա Պօղոսի բերանին։ Իսկ ուստան, ունկնդիրների հետաքրքրութիւնն աւելի գրգռելու համար, նախ հազաց, սրբեց աչքերը, որ ծխից արտասուում էին, ապա հանեց գօտիից քաշ արած տոպրակից բազմաթիւ ածելիներից մէկն ու սկսեց սրել, քսելով մէջքին կապած կաշուէ սրոցին։

—Աբրահամ աղան,—արտասանեց նա, վերջապէս, կարելոյն չափ իւր բութ դէմքին խորհրդաւոր լրջութիւն տալով,—հիմայ չի խօմ կոտր։ Վեց ամիս է նրա քամակը թոյլ է, միայն թաղցնում էին։

—Էէ, շատ լաւ, ախար պատճառը։

—Պատճառը, հըմ, պատճառը։ Մարդ է էլի, մեծ մարդ է, ամեն մի մեծ մարդ իւր քէֆն ունէ։

—Ի՞նչպէս, ի՞նչպէս։

—Էհ, բան է էլի,—պատասխանեց Պօղոսը, աչքի տակով խորամանկօրէն նայելով Սաղաթէլի երեսին,—ասում են, հիմայ կոտր ընկնելն էլ մօդա է։

Դարաբաղի կողմերից է սկսուել։ Գոհանամ դքէն, Տէր-մարդ կայ, որ մարդութիւնը փողից շատ է սիրում, մարդ էլ կայ, որ Աստծու տուածից չնորհակալ չէ։

Արտայայտելով այս խորին փիլիսոփայական միտքը, ուստա Պողոսը ածելին դրեց տոպրակի մէջ, հանեց երկրորդը ու սկսեց աւելի եռանդով սրել։

— Ուստա Պողոս, խօսքիդ ջոկհարն եմ հասկանում,— ասաց Սաղաթէլը,— մենք էլ վաճառական ենք եղել, քչից-շատից խելք ունինք։ Ասա, տեսնենք։

Նա վերցրեց երկաթեայ խառնիչն ու մանղալի կրակը ցրուեց։ Ծուխը մի փոքր մեղմացաւ, ուրախ կրակն ամենքին տրամադրեց զուարթ։ Շերամապահ Անտոնը ամենից առաջ ըմբռնեց Պողոսի ու Սաղաթէլի խօսքերի յետին իմաստը։

— Շլինի թէ,— ասաց նա, դառն թամբաքուի չիբուխը բերանից հանելով և բեղերի ծլլոցը սրբելով,— չլինի թէ Աբրահամ աղան ուրիշների կարողութիւնը տակովն է անում։ — Շը՛ըթ,— թքեց նա ատամների արանքով մանղալի մէջ և չիբուխը նորից դրեց բերանը։

Ուստա Պողոսը ոչինչ չպատասխանեց, բայց և չբողոքեց էլ շերամապահի համարձակ ենթադրութեան դէմ։ Միւսները, բացի Սաղաթէլից, բողոքեցին, մանաւանդ տիրացու Նիկոլայը։ Սուտ կ՛ասը, Աբրահամ աղան սուտ կ՛ասը։ Չէ, այս խելքի մօտիկ բան չէ։ Աբրահամ աղան քաղաքի ամենաազնիւ վաճառականն ու ամենաազնիւ մարդն է։ Ահա տասներկու տարի է եկեղեցու երէցփոխ է և ինքը տարի քաղաքի գէպուտատ, մինչև այսօր ո՞վ է համարձակուել նրա անունին կեղտ կպցնել։

— Տիրացու,— նկատեց շերամապահ Անտոնը, որ ատելով ատում էր Նիկոլային,— ինչպէս տեսնում եմ,

Աբրահամի գցովի չայը շատ ես հաւանել։ Բայց համը մի տանիր։ Չը՛ըթ...

—Ի հարկէ,—ասաց ուստա Պողոսը,—մեզանից ով չէը խաբուի, եթէ տանն ունենար մի չար սատանայ։ Գիշեր-ցերեկ սատանան կըփսփսայ ականջիդ ու կողքիդ կըբզբզի. «արա, արա», դու էլ կանես էլի, ինչ զարմանալու բան կայ։—Հիշ-հիշ, հիշ-հիշ,—շարունակեց նա սրել ածելին։

Ամառն որմնադիր, ձմեռն անգործ Հայրապետն իմաստուն եղանակով նկատեց, թէ բարեպաշտ քրիստոնեային ոչ մի սատանայ չի կարող խաբել, եթէ նրա մէջ չարութեան սերմ չըլինի։

—Սատանայ էլ կայ, սատանայ էլ,—հակառեց Սաղաթէլը,—ուստա Պողոսը, որ բերանը բաց արաւ, իսկոյն իմացայ քամին որտեղից է փչում։ Չը՛ըթ...

—Աֆարիմ մարդ,—գովեց նրան Պողոսը,—բան դու Աբրահամի եղբօր Իսրայէլին շատ լաւ ես ճանաչում։ Հիշ-հիշ...

Իսրայէլի անունն ընդհանուր ատելութիւն շարժեց։ Այդ տակաւին երիտասարդ վաճառականը քաղաքի պահպանողականների աչքում միշտ կասկածելի էր իւր չափազանց նորամոլութեամբ։ Նա ոչ միայն օսլայած շապիկ ու ճռճռան կօշիկներ է հագնում, այլ և իւր կնոջն ստիպում է արխալուղի ու լայն փոխանի տեղ հագնել ինչ-որ միջից ծակած տոպրակ ու երեսը բաց փողոց դուրս գալ։ Նա ամեն տարի Մոսկուայից որևէ նորութիւն է բերում և քաղաքը ապականում։ Այս անգամ էլ այնտեղից վերադարձաւ բեղերը կտրած ու ծնօտի վրայ մի կրտոր միրուք թողած, իսկ և իսկ անցեալ տարուայ ֆռանգի պէս, որ բուլվարում մի մեծ վրան էր դրել և տակը շներ էր պարաստնում։

—Այ, աղա՛ս դու ես, հէնց այդ չուն պարացնող Իսրայէլն է ամեն բան սարքողը,—վատահացաւ, վերջապէս, ասել ուստա Պողոսը, - թէ չէ՝ Աբրահամ աղան օրինաւոր մարդ է։ Չը՛շ-չիշ, չը՛շ-չիշ...

—Բերանդ օրհնուի, ասա պրծիր էլի,—գոչեց Անտոնը։—Չը՛ըթ, ումի փողերն է տակովն անում։

—Մառազովի։ Քիչ ու պակաս, երեսուն հազար մանէթ։ Չիշ-չըշ, չիշ-չըշ...

Ամբողջ ժողովարանը միաձայն արձակեց խորին զարմացման մի վայրենի հնչիւն, այնքա՛ն զումարը մեծ էր նրա համար։

—Ղոչա՛ղ մարդ,—արտասանեց նախկին մանրավաճառ Սաղաթէլը՝ իրը հեգնաբար, բայց հոգու խորքում նախանձելով Աբրահամին։

—Դու այն ասա, մեր մարդկանցից ումի տակից է փալասը քաշում,—հարցրեց Անտոնը։

—Միայն մէկի,—պատասխանեց Պողոսը,—բայց լաւ, օրինաւոր է քաշում։ Չիշ-չըշ, չիշ-չըշ, չիշ-չըշ...

—Չը՛ըթ։ Ով լինի այդ մէկը։ Չը՛ըթ...

—Բաղդասարը։

—Խոզը։

Ամբողջ ժողովարանում չըզտնուեց մէկն, որ այդ մարդուն ցաւակցէր։ Բաղդասարը մի անօգուտ մարդ է, ով է մինչև օրս նրա տանը մի կտոր հաց կերել։ Ումին է նա իւր կեանքում մի կոպէկի լաւութիւն արել։ Ցնից խանութ է գնում, խանութից տուն, ոչ մի տեղ չի երևում։ Մինչև անգամ եկեղեցի էլ չի գնում։ Միայն ուրիշներին հայհոյել գիտէ։ Նա խոնարհ մարդ չէ, նրան զրկեն խակի մեղք չէ, ոչ՝ Աբրահամ աղայ...

Ժողովարանը տրամադիր էր Բաղդասարին երկար պարսաւելու, սակայն յանկարծ ներս մտաւ Վարդանը հեալով ու շնչասպառ։

—Ուստա Պողոս, հայրս քեզ կանչում է։

—Ի՞նչ է պատահել, որդի,

—Հիւանդացել է, արիւն պիտի առնես։

—Բահ բահ, խեղճ մարդ,—գոչեց ամբողջ ժողովարանը կեղծ ցաւակցութեամբ։

Պողոսը շտապով կոնատակը դրեց պղնձէ թասն ու Վարդանի հետ դուրս գնաց։

—Տիրացու Նիկոլայ,—ասաց Անտոնը,—քացախ խմիր, քեզ համար հոդեճաշ է պատրաստուում...

XII

Ուստա Պողոսը Բաղդասարին գտաւ անկողնի մէջ։ Պատահել էր հետևեալը։ Մի ժամ առաջ թշուառ մարդը գնում է Աբրահամ աղայի մօտ վերջնական խօսքն իմանալու և շատ չանցած տուն է վերադառնում գժուածի պէս։ Վերցնում է իւր ժանգոտ դաշոյնը, ուզում է գնալ Աբրահամին սպանելու։ Գիւլիւմը փորձում է թոյլ չտալ նրան գնալու։ Բաղդասարը հրում է նրան ու վազում դէպի դուրս։ Դռների մօտ խեղճ մարդու ձեռները թուլանում են, գլուխը թեքւում է կրծքին, դաշոյնը ձեռից ընկնում է։ Նա թաւալւում է յատակի վրայ և սկսում է խրխռալ ընկնաւորի պէս։ Գիւլումը շտապում է պատռել նրա արխալուղի օձիքը ու երեսին ջուր սրսկել։ Ոչինչ չի օգնում։ Մայր ու որդի մի կերպ հիւանդին պառկեցնում են անկողին, և ահա կէս ժամ է պառկած է մէջքի վրայ, անիմաստ աչքերն առաստաղին յառած, չի խօսում, չի շարժւում, չի հառաչում անգամ։

Ուստա Պողոսն անմիջապէս սկսեց գործադրել իւր հնարագիտութիւնը։ Նախ և առաջ նա, Օսմանի օգնութեամբ, հիւանդին շուռ տուեց երեսի վրայ և սկսեց մէջքից «արիւն առնել»։ Բամբակը թաթխելով

սպիրտի մէջ, վառեց և, պահելով հիւանդի թիկունքների մէջ տեղում. թէյի բաժակը դլխիվայր դրեց վրէն։ Կատարելով այս գործողութիւնը մի քանի անդամ հիւանդի մէջքի զանազան կողմերում, որպէս զի արիւնը մղուի կաշուի տակ, նա վերցրեց ածելին և սկսեց անխնայ կտրատել ուռայցները։ Յետոյ հիւանդին շուռ տուեց կողքի վրայ և նրա կոկորդին կրպցրեց տասնուհինդ խոշոր տզրուկներ և թոյլ տուեց, որ ծծեն Բաղդասարի յիսունուչորս ամեայ արիւնը։ Կէս ժամում տզրուկներն այնքան կշտացան, որ ուռան, կլորացան ու մէկ մէկ պոկուելով, հասուն մրգի պէս, գլորուեցին հիւանդի թաւամազ կրծքի վրայ։

Հիւանդն իւր հայեացքը դարձրեց դէպի կինը։ Եւ այդ հայեացքն արտայայտեց այնպիսի խորը տանջանք, որ Գիւլիւմի սիրտը սկսեց մորմոքուել։ Պարզ էր, որ թշուառը զգում էր իւր վիճակի վտանգաւորութիւնն ու աւելի տանջւում, որ անկարող է զգացածն արտայայտելու։ Ապաղայում պարզուեց, որ այդ օրն Աբրահամ աղան Բաղդասարին ընդունում է շատ կոպիտ, չի էլ ուզում հետը խօսել։ Բաղդասարն անպատուում է նրան, թքում է երեսին կնոջ ու որդիների ներկայութեամբ։ Աբրահամը իւր որդիներին հրամայում է դուրս վռնդել նրան, «վզակոթին տալով», իսկ Իսրայէլը անամօթաբար ծիծաղում է երեսին։

Գիւլիւմը նայում էր ամուսնուն դառն վշտակցութեամբ և գլուխն անզօր երերում։ Քսան տարի կենակցել էր այդ մարդու հետ, քսան տարի շարունակ զոնուել էր նրա պողպատեայ բռնակալութեան տակ, որպէս գնուած ստրուկ, ճանաչել էր միայն և միմիայն նրա կամքը, հպատակուել էր միայն և միմիայն նրա ասին, միշտ խեղդելով իւր մէջ սեպհականը։ Եւ ահա այժմ, երբ հարկաւոր էր փոքր ի շատէ ինք-

նուրբոյնութիւն, կորցրել էր ինքն իրան ու չուարուած նայում էր բռնակալի երեսին, դարձեալ նրանից սպասելով հրամանների։ Երբէք նա բաղդաւոր չէր եղել այդ մարդու հետ, բայց և երբէք չէր երեւակայել, թէ կարող է բաղդաւոր լինել նրանից զրկուելով։ Երկար տարիների կենակցութեամբ ամրացած սովորութիւնը փոխարինել էր նրա մէջ ամուսնական սիրոյ զգացմանը, և նա, տանջուելով հանդերձ բռնակալի ձեռքում, զգում էր իւր հոգին ու սիրտը նրա հոգու ու սրտի հետ ձուլուած, միացած։

—Ի՞նչ ես ուզում, ա մարդ, ասա,—կրկնում էր նա կսկծալի եղանակով։

Եւ ոչ մի պատասխան։ Բռնակալի շրթունքները կապտել էին, սեղմուել, փակուել երկաթէ դռնակների պէս, և ոչ ոք չըգիտէր ինչ է կատարւում նրա ներսում։ Նա մտիկ էր անում անշարժ հայեացքով կնոջն, որդուն, և ուրիշ ոչինչ։ Եւ նրա յամառ քարացած հայեացքի մէջ կար ինչ-որ սոսկալի բան, որ սառցնում էր Գիւլիւմի արիւնը երակներում։

Ուստա Պողոսը գործադրեց իւր վերջին միջոցը։ Հրամայեց Օսմանին մորթել մի սև հաւ, փորոտիքը թաղել հողում ու մարմինը բերել։ Լեզգին իսկոյն կատարեց հրամանը։ Ուստան հաւը բաց արաւ և միջի կողմով դրեց հիւանդի կրծքին։ Սև հաւը պիտի դուրս քաշէր անյայտ ցաւը իւր խորհրդաւոր զօրութեամբ, որ պարգևել էր նրան դռեհիկ ժողովրդի սնահաւատութիւնը։

Նէրս մտաւ Մարիամը իւր ամուսնու ուղեկցութեամբ և, գլխի շալը մի կողմ շպրտելով, յարձակուեց հօր վրայ։ Արդէն դռներին չըհասած նա սկսել էր բարձրաձայն լալ և կրծքին զարկել ձեռներով։ Մի ծանր, երկաթատև հառաչանք թռաւ հիւանդի անսահման տանջուող կրծքից։ Այսպէս, ուրեմն, նա մեռ-

նում է։ Մթթէ։ Մեռնում է, չը կարողանալով մի խօսք անգամ արտասանել։

Նա արտասուեց, խուլ, ընդհատուող հեծկլտանքով։

Մաքիամի ամուսինը – Ստեփան Փորսողեանը բողոքեց ուստա Պողոսի գործադրած միջոցների դէմ։ Այն օրից, երբ նա դէն էր ձգել ասիական քօշերն ու հագել եւրոպական կօշիկներ, իւրացրել էր կիսալուսաւոր քաղաքացու այն յաւակնութիւնը, որ աւելի հակակրելի է քան լիակատար գռեհկութիւնը։

—Մարդուն գցել ես, տաւարի պէս կտրտել, կարծում ես դրանով կառողջացնես։ Ժամանակ է այդ ածելին-մածելին, տզրուկ-մզրուկը դէն շպրտել։ Աչքներդ բաց արէք, խեղճեր, աշխարհ տեսէք։ Բժիշկներ են դուրս եկել, որ գերեզմանից մեռելին հանում են, ոտքի կանգնեցնում, կեանք տալիս։ Գիտութիւն է հարկաւոր, ուսում է հարկաւոր, թէ չէ... դալլաք։ Հը, ինչ ես երեսիս մտիկ անում, ուստա Պողոս, մարդուց երկու ոչխարի արիւն ես հանել, տնաքանդ, էլ նա ոտքի կը կանգնի... Ես իսկոյն բժիշկ կը բերեմ։

Ամբողջ օրը Բաղդասարը մնաց մի և նոյն դրութեան մէջ, գրեթէ մի և նոյն դիրքում—կողքի վրայ անշարժ ձգուած, ինչպէս բունից կտրուած ծառ։ Ոչինչ փոփոխութիւն, ոչ դէպի լաւը, ոչ դէպի վատը, նոյն սեղմուած շրթունքները, նոյն արիւնալի աչքերը, նոյն անսահման տանջանքը դէմքի վրայ։

Իրիկնադէմին Ստեփանը ներս մտաւ Զիլզիլ քաղաքի միակ բժշկի հետ։ Դա մի ծեր և խուլ մարդ էր։ Վաղեմի գիտութեան աղքատիկ պաշարը նրա ալեզարդ գլխում չորացել էր այնչափ, որչափ արիւնը պաղել երակներում։ Հարկաւոր եղաւ բաւական մեծ ջանք Բաղդասարի յանկարծակի հիւանդութիւնն

ու գործադրուած միջոցները նրան բացադրելու համար։ Այս մանաւանդ դժուար էր Ստեփանի համար, որ գործ էր ածում այնպիսի բառեր, որոնց զուր կը լինէր որոնել ռուսաց բառարանում։ Բժիշկը ոչինչ չը հասկացաւ, ուստի և դեղատոմս գրեց ու հեռացաւ։

Հիւանդի գլխի մի կողմում նստած էր Գիւլիւմը, միւս կողմում Մարիամը, երկուսն էլ ձեռները ծոցներին դրած։ Մերթ ընդ մերթ Գիւլիւմը հառաչում էր և շալի ծայրով արցունքը սրբում։ Նա ոչինչ չը գիտէ անել, բացի հառաչելուց, արտասուելուց, տանջուելուց, որովհետև միայն այս բանում նրանից կամքի ոյժ չի պահանջւում։ Համեմատաբար աւելի եռանդ էր արտայայտում Մարիամը։ Փոխում էր հիւանդի կրծքի կոմպրէսը, ամեն ժամ ճշդութեամբ դեղը դդալով ածում նրա բերանը։ Մերթ ուղղում էր հիւանդի բարձը, մերթ վերմակը, հէնց այնպէս, տանջուող հօրն օգնելու փափագից դրդուած։ Նա ձգտում էր թշուառի աչքերի մէջ կարդալ նրա ցանկութիւնը, և իզուր։ Մի և նոյն ժամանակ, աշխատում էր հանգստացնել մօրը. ոչինչ, կանցնի, տաքարիւն մարդ է, բարկութիւնից արիւնը գլխին է խըփել, կըհանգստանայ ու կառողջանայ։ Գիւլիւմը յուսահատութեամբ շարժում էր գլուխը։ Նա չը գիտէ Բաղդասարի ցաւը, երեխայ է, խելք չունի։ «Մարդը դամլա է»։

Երեկոյին, վերջապէս, համարձակուեցին այցելութեան դալ Գիւլիւմի քոյրերը իրանց ամուսինների հետ նաև հարևաններից ոմանք։ Եւ սրանք իրանց անօգուտ հարցերով, կեղծ ու անկեղծ ախուվախերով կրկնապատկեցին Գիւլիւմի տառապանքը։ Ոմանք անքաղաքավարութիւն ունեցան մինչև անգամ հարցնելու, արդեօք Բաղդասարը որչափ ժառանգութիւն կըթողնի մահից յետոյ որբի համար։ Տէր Աստուած,

Դիլիւմը ոչինչ չըդիտէ, թողէք լուռ արտասուի ու տանջուի, նա միայն այս կարող է անել։

Հարևան կանանցից մէկը պնդում էր, թէ Բաղդասարին սատանաներն են կապկապել, հարկաւոր է կանչել մի կախարդ, որ նրանց փախցնի։

Այս խելօք առաջարկութիւնը շարժեց ներկայ եղողներից միայն մէկի ծիծաղը։ Դա Դիլիւմի կրտսեր քրոջ Զառիկի ամուսինն էր - Դաւիթ Դանիէլեանը, մի վերին աստիճանի ջերմեռանդ լիւթերական։

—Քոյր Շուշան,—ասաց նա սատանաների մասին խօսողին,—մեղք ես գործում, մեծ մեղք։ Մեր ամենքի փրկութիւնն ու կորուստը Յիսուսի ձեռքին է։ Աղօթք արա՛, քոյր Դիլիւմ, մենք ամենքս միայն աղօթքով կարող ենք փրկուել։ Տէր, օգնիր մեզ,—աղօթեց նա ինքը, ձեռները կցելով միմեանց, գլուխը ծռելով դէպի ուսը և աչքերը նորաղարձի ջերմեռանդութեամբ ուղղելով վեր,—Տէր, ներիր Բաղդասար եղբօր մեղքերը։ Աղօթք արա մտքումդ, Բաղդասար եղբայր, Եհովան հայր Աբրահամի հաւատը փորձեց, զոհը չընդունեց... Բաղդասար եղբայր, Իսահակի և Յակովբի Աստուածը քեզ կօգնի, աղօթք արա...

Զարմանալի բան։ Հիւանդը, որ մինչև այդ վայրկեան լուռ էր, յանկարծ ցնցուեց, այլափոխուեց։ Նա աչքերը դարձրեց դէպի մոլեռանդ բողոքականը, նայեց նրա երեսին սուր, երկարատև հայեացքով և արտասանեց.

—Զայնդ կտրիր, փարիսեցի...

Ոչ մի ազգականի նա այնքան չէր ատում, որքան Դաւիթ Դանիէլեանին։ Նա միշտ կրկնում էր, թէ մի մարդ, որ դաւաճանել է պապերի կրօնին, ընդունակ է հարազատ եղբօրն անգամ փողով ծախելու։ Բացի սրանից, նա առ հասարակ բողոքակա-

նութիւնը համարում էր անհաւատութիւն և չէր քաշւում նոյն իսկ շուկայում երես առ երես հայհոյել կրօնափոխներին։

Հիւանդի լեզուի անպասելի բացուիլն առաջացրեց իրարանցում։ Մարիամն ուրախութիւնից ճչաց ու ոտքի թռաւ։ Գիւլիմը հետևեց նրա օրինակին։ Վարդանը սենեակի անկիւնից վազեց, մօտեցաւ հօր անկողնին և աչքերը յառեց նրա երեսին։ Հիւրերն ապշած նայեցին միմեանց։ Միայն Դաւիթ Դանիէլեանը չշփոթուեց։ Նա շարունակ արտասանում էր. «Օրհնեալ լինի Քո զօրութիւնը, Յիսուս, սիրելի Յիսուս»։

—Դուրս արէք անհաւատին, դուրս,—գարձեալ արտասանեց հիւանդը, որի աչքերը նմանւում էին թէյով լի պնակների։

—Բաղդասար եղբայր, մեղք ես գործում,—ասաց մոլեռանդ բողոքականը,—աղօթք արա, յիշիր Յովբ երանելուն... Նրա երես-մերեսը փթում էր, բերանը որդներով լեցուել էին, միսը թափւում էր մարմնի վրայից, բայց նա էլի աղօթք էր անում։ Տանջուիր, բայց աղօթք արա, հոգիդ դրախտ կրգնայ, Եհովայի զոգը, աղօթք արա...

Դարձեալ հրաշք. հիւանդը զարմանալի արագութեամբ գլուխը բարձրացրեց, նստեց։ Այժմ նրա այտերը կապտել էին, կոկորդի երակները զուրս ցցուել երկաթի թելերի պէս։ Նրա լեզուի կապանքը խորտակուեց։ Անէծքների ու հայհոյանքների մի անզսպելի հոսանք դուրս ժայթքեց նրա բերանից։ Եւ ինչ հայհոյանքներ։ Ներկելով ոտից մինչև գլուխ ատելի կրօնափոխին, նա դարձաւ միւս հիւրերին, տուեց իւրաքանչիւրին պատշաճաւոր ածական, յիշեց նրանց հայրերին, պապերին, չրմոռացաւ և նրանց ազգականներին։ Կանգ առաւ մի քանի վայր-

կեան և յետոյ իւր ամենակատաղի, ամենաինքնատիպ յիշոցներն ուղղեց Աբրահամ աղայի ընտանիքին ու ամբողջ տոհմին։ Նրա գրգռումը հասաւ իւր զենիտին, շունչը սպառուեց, կոկորդը սկսեց արձակել ինչ-որ վայրենի հնչիւններ, բերանը փրփրեց, դէմքը կապտեց լեղակի պէս, և նա, որպէս գնդակահար, ընկաւ մէջքի վրայ։

—Տէր, ներիր այս մարդուն,—ասաց Դաւիթ Դանիէլեանը։

—Ա կնիկ, մարդը մեռնում է, տէրտէր կանչել տուր, ասացին հարևան կանայք։

Գդակը վերցնելով, Վարդանը վազեց փողոց։

XIII

Դիշերը ցուրտ էր ու մթին։ Ուրիշ ժամանակ Վարդանն երբէք այս պահին մենակ չէր դուրս գայ տնից, այս անգամ չըվախեցաւ։ Ահա եօթ-ութ ժամ է նրա հոգին հեծծում է կատարուող անցքի ծանրութեան ներքոյ, սիրտը մորմոքւում։

Այդպէս, ուրեմն, նրա հայրը մեռնում է, նա մընում է որբ, անտէր, անպաշտպան։ Աբրահամ աղան սուտ բարեկամութեամբ մոլորեցրեց խեղճ մարդուն, առաւ փողերն ու կլանեց։ Կլանեց նաև Վարդանի փողերը։ Ախ, այդ սիրելի, պաշտելի փողերը, որոնց վրայ այնքան յոյսեր էր դրել։ Ախ, որպիսի եռանդով ու սիրով էր նրանց ժողովել, կոպէկ-կոպէկ, այն օրից, երբ աչք էր բաց արել, հօրը խնդրելով ու աղերսելով, որ ամեն երեկոյ մի քանի կոպէկ գցի նրա տուփը, Օսմանին գիշեր-ցերեկ աշխատեցնելով, որ գդալներ շինի, ընկերներին խաբելով, իրան զրկելով, մուշտարիների առջև հազար ու մի սուտ եր-

դումները ուտելով իւր խսիրները, պարաններն ու կոտրած արկղները ծախելու համար։

Դեռ մի տասն օր առաջ մտքում տեսակ-տեսակ ծրագիրներ էր յօրինում իւր դումարը կրկնապատկելու, եռապատկելու, տասնապատկելու համար։ Այո, նա մինչև անգամ զգում էր ինչ-որ հեռաւոր, թոյլ կապ իւր և իւր իդէալի, իւր երազների վերջնակէտ հրէշի մէջ։ Ոչ ոքի չէր ասում, բայց զգում էր։ Եւ յանկարծ բոլոր ցնորքներն ոչնչանում են, բոլոր ծրագիրներն օդն են ցնդում և ի վերայ այսր նա որբանում է։ Իսկ մայրը, այդ թշուառ, անլեզու կինն իւր դառն հառաչանքներով, ախուվախով, արցունքներով աւելի զօրացնում է նրա վիշտը։ Այդ կինն այրիանալու է և ընկնելու է Վարդանի վզին իբրև անտանելի ծանրութիւն։ Որի ու նրան կերակրիր։ Եւ ինչո՞ւ են հարկաւոր այդ մայրերը որդկերանց համար։ Ծնեցին իրանց զաւակներին, փոքր ինչ մեծացրին, թող մեռնեն։ Տխուր, մռայլ ապագայ...

«Դայլ եղիր, դայլ, կեր, որ քեզ չուտեն», հնչում էին նրա ականջին հօր խօսքերը, որպէս առաւօտեան զանգերի զողանջիւնը բարեպաշտի ականջին։ Դայլ։ Ոչ, դայլ լինելը քիչ է։ Պէտք է լինել օձ, վագր, շուն, կարիճ, խայթել, կծել, կեղեքել, միայն թէ ոխ հանել այդ անխիղճ, անաստուած, դարշելի ու զազրելի Աբրահամից։ Միայն նրանից։ Քիչ է. նրա եղբօրից էլ, որդիներից էլ, թոռներից էլ, ամբողջ տոհմից։ Ախ, կրգայ, արդեօք, այն երջանիկ օրն երբ Վարդանը միջոց կունենայ հօր աւանդը կատարելումէկ, իւր սրտի կրակը հանգցնելու—երկու, փողի ուժով բոլորին տիրելու ու ստրկացնելու—երեք։ Կրգայ, անպատճառ կրգայ։ Վարդանն ամեն ինչ կանի, որ հարստանայ և ամենքին ներշնչի սարսափ։ Այն

ժամանակ նա ոչ ոքի չի խնայի, ոչ բարեկամի, ոչ ընկերոջ, ոչ ազգականի։

Դեռահաս կրծքի տակ բարձրացել էր անսովոր փոթորիկ, մանկական հոգին ալէկոծւում էր։ Բոպէ առ բոպէ վրիժառութեան աւիւնն այնքան սաստկանում էր նրա մէջ, որ երկու ձեռներով բռնում էր գլխի սև մազերն ու ձգձգում ամբողջ ուժով։ Կարծես, այդ խիտ ու կոշտ մազերի մէջ էր նստած Աբրահամն իւր բոլոր մերձաւորներով, իւր նախնիքներով ու ապագայ սերունդներով։

Հազիւ նա դուրս էր եկել փողոց, երբ լսեց իւր անունը։ Դարբասի ետևից, ձմերային թանձր մառախուղի միջից յայտնուեց մի նիհար կերպարանք։

— Ես եմ, մի վախենար, — արտասանեց մի մեղմ պատանեկական ձայն։

Ձեռները ցրտից կռնատակերին դրած, ամբողջ մարմնով դողդողալով, Մինասը մօտեցաւ Վարդանին։

— Հայրդ ինչպէս է, — հարցրեց նա։

— Մեռնում է։

Մինասը, մի ցաւակցական ճիչ արձակելով, մի քայլ յետ դրեց։ Խաւարի մէջ մահուան անունը նրան թուաց սարսափելի։ Նա անկեղծ սրտով կարեկցեց ընկերոջը։

— Օհ, դու մենակ կը վախենաս, — ասաց նա, — ես քեզ հետ կը գամ տէրտէրի մօտ։ Դիտես, մի ժամ կըլինի կանգնած էի դարբասի մօտ. սպասում էի մի դուրս եկողի, որ հօրդ մասին հարցնէի։ Հայրս է ինձ ուղարկել։ Վախենում էի ներս մտնել, Օսմանը ինձ կրծեծէր։ Ախ, ինչից է մեռնում խեղճ հայրդ։

— Սպանել են, պատասխանեց Վարդանը, ատամները կրճտելով։

Մինասը ցնցուեց։ Ձեռները դնելով ասուեայ զօտիի մէջ, դողդոջուն ձայնով հարցրեց.

—Ով։

—Աբրահամ աղան։

Եւ Վարդանը պատմեց բոլորը։ Հայհոյեց հօր անզութ հարստահարիչին ճիշդ այն յիշոցներով, որ լսել էր հօրից մի քանի րոպէ առաջ։

—Մի՛, մի՛,—զսպեց նրան Մինասը, որ երբէք ոչ ոքի չէր հայհոյում,—հայհոյելը մեղք է։ Դու սուս արա, Աստուած ինքը Աբրահամ աղային կը պատժի։

—Դու էլ թող է, Աստուա՜ծ, Աստուած, եթէ Աստուած պատժող է, թող հէնց հիմայ, հէնց այս րոպէին պատժի, որ սիրտս հովանայ։

—Գողերը, մարդասպանները, աւազակները, ուրիշներին կողոպտողները, բոլորը միւս կեանքումն են պատժւում, գեհենի մէջ։

—Տէրտէր-վարդապետի պէս ես խօսում։ Միւս կեանքս ո՞րն է։ Չեմ ուզում քո միւս կեանքը։ Թող այս աշխարհում լաւ ապրեմ, յետոյ ուր տանում են տանեն հոգիս։ Անխելք, եթէ ուզում ես ճշմարիտն իմանալ, իսկի միւս կեանք չըկայ էլ։

—Բա՜ւ,—ասաց Մինասը։

—Հապա՜։ Միւս կեանքը, արքայութիւն ու դժոխքը խեղճերն են հնարել իրանց այրուող սիրտը հովացնելու համար։ Հասկացա՞ր։

—Վա՜ըղան, Վա՜ըղան,—գոչեց Մինասը, սարսափելով ընկերոջ աստուածընդդէմ խօսքերից,—այդ ինչեր ես ասում, Աստուած քեզ կը պատժի, մեղայ եկ...

—Դու յիմար ես,—արտասանեց Վարդանն արհամարհանքով։

Այդ պահին նրանք անցնում էին Աբրահամ աղայի տան մօտով։ Վարդանը մի քանի վայրկեան կանգ առաւ, նայեց լուսամուտներին, որոնց միջով դէպի փողոց էր սփռուել լամպարների դեղնագոյն

ղոյսը։ Դա մի երկյարկանի շինութիւն էր բաւական եւրոպական ճաշակով։ Ստորին յարկի լուսամուտները փոքր էին, նեղ և երկաթէ ցանցերով պաշտպանուած, վերին յարկի լուսամուտները մեծ էին և առանց ցանցերի։

Աբրահամ աղան իւր ընտանիքով բնակւում էր տան վերին յարկում, իսկ ստորին յարկը ծառայում էր իբրև ամբարանոց, ուր դարսուած էին զանազան ծախու ապրանքներ, մեծ մասամբ մահուդեղէն—երևի, Մօրոզովի սեպհականութիւնը։

Աբրահամն ունէր երեք որդի և երկու աղջիկ։ Մեծ աղջիկը ամուսնացել էր մի տարի առաջ, փոքրը դեռ տանն էր։ Մեծ որդին, Արշակը արդէն աւարտել էր ուսումը քաղաքային ուսումնարանում և այժմ ծառայում էր հօր խանութում։ Երկրորդը մեծ քթով, լայն բերանով Դանիէլն էր. նա, որ ուսումնարանում նկատեց Վարդանին, թէ երջանիկ հրէայի անունը Ուռշիդ չէ, այլ Ռօդշիլդ։ Երրորդ որդին վեց տարեկան մանուկ էր Սամուէլ անունով։

Նայելով լուսամուտներին, Վարդանը երևակայեց ամբողջ ընտանիքը նստած սեղանի շուրջը հանգիստ ընթրելիս։ Նրա ոխը զրգռուեց մանաւանդ դէպի իւր հասակակիցները։ Ցանկարծ նրա գլխում ծագեց մի չար միտք—վրիժառութեան մի սոսկալի միջոց։ Դիշերուայ կիսին կոտրել ներքին յարկի լուսամուտները, թափել ներս նաւթ և վառել։ Քանի մի րոպէում կրակը կը դրաւի ամբողջ ամբարանոցը, յետոյ կանցնի վերին յարկը, տնեցիների քնած պահին։ Եւ Աբրահամ աղան կայրուի իւր ամբողջ ընտանիքի ու ամբողջ հարստութեան հետ։ Եւ ոչ միայն նա, այլ և Իսրայէլն իւր ընտանիքով, որ բնակւում է տան միւս մասում։ Ի՜նչ հիանալի միտք։ Բայց ով կիրագործի նրան։ Ինքը Վարդանը։ Օհ, ոչ, վտանգաւոր է։ Դու-

ցէ Օսմանը՞։ Ոչ, նա յիմար լեզգի է, այսպիսի բաներ չի անի, նրա վրիժառութեան միակ զէնքը դաշոյնն է։

—Ախ, որտեղ է Մկիչը,—շշնջաց Վարդանը, շարունակելով իւր միտքը լսելի ձայնով,—նա անվախ տղայ է։ Նա կարող էր անել։

—Ի՞նչ կարող էր անել, ինչ ես խօսում,—զարմացաւ Մինասը,—գնանք, ինչու՞ կանգնեցիր այս տան առաջ։ Հայրդ կըմեռնի առանց սուրբ հաղորդութեան, մեղք է։

—Կորիր, դու լաւ ընկեր չես, վախկոտ ես։

Նա շարունակեց ուղին։ Մի քանի քայլ անցած, դարձեալ կանգ առաւ։ Վրիժառութեան փափագն արդէն այնքան զօրեղ էր նրա մէջ, որ սառնասիրտ անցնել ատելի տան մօտով անկարող էր։

—Մինաս, մի քար դտիր,—պատուիրեց ընկերոջը։

Մինասը գետնից վերցրեց մի բռունցքաչափ քար և տուեց նրան։

—Մինաս, դու ինձանից լաւ քար գցող ես, հապա, փորձիր, կարող ես այ այն մէջտեղի լուսամտին խփել։

—Ինչու՞ խփեմ։

—Հէնց այնպէս, իմ խաթրու։

—Ոչ, լաւ չէ, ներսում մարդիկ կան, քարը կըդիպչի նրանց։

—Ը՞ը, ես քեզ մարդ ասողին ինչ ասեմ,—զոչեց Վարդանը։

Նա ամբողջ ուժով քարը գցեց դէպի վերին լուսամուտներից մէկը։ Լսուեցին փշրուող ապակիների հնչիւններ ամայի փողոցի մթութեան մէջ։ Վարդանն, ինքն իւր արածի հետևանքից սարսափելով, փախաւ առանց յետ նայելու։

—Այդ ինչ արիը, ինչու,—գոչեց Մինասը, հազիւ հասնելով նրան;—դէ լաւ, մի փախչիը, ոչ ոք չի վազում ետևիցդ։

Տէր-Համբարձումը ստիպուած եղաւ սուրբ հաղորդութիւնը Բաղդասարի բերանն ուժով մտցնել։ Ժայթքելով կատաղի յիշոցների բուռն հոսանքը, հիւանդը նորից զրկուել էր խօսելու ընդունակութիւնից։ Դա երկրորդ հարուածն էր, որին երկու օր անցած յաջորդեց երրորդը։ Այնուամենայնիւ, Բաղդասարն ապրեց մի ամբողջ շաբաթ, այլ ևս մինչև վերջին շունչ չրկարողանալով մի բառ արտասանել։

XIV

Գիւլիւմն այրի է, Վարդանը որբ, խանութն անտէր։ Այժմ, երբ մարդն այլ ևս հաշիւները վերջացրել է այս աշխարհի հետ, ոսկորները հանգչում են գերեզմանում, բոլորը ցաւակցում են նրա կնոջն ու որդուն։ Այժմ նոյն իսկ ինքը Բաղդասարը վատ մարդ չի թւում։ Անօգուտ մարդ էր, ճիշդ է, բայց չէ որ և՛ անվնաս էր։ Մի քիչ լեղուն անհանդիստ էր, ինչ անենք, խօմ զուր տեղը չէր հայհոյում մարդկանց։

Այսպէս էր դատում Զիլգիլ քաղաքի հասարակական կարծիքը, որի գլխաւոր բերանն էր ուստա Պօղոսի սափրատունը։ Այժմ այստեղ անխնայ դատափետում էին Աբրահամ աղային ու նրա «աներես» եղբօրը։ Անխիղճ մարդիկ, կլանեցիք թշուառ մարդու արիւն-քրտինքով վաստակած հարստութիւնը, իրան էլ գերեզման մտցրիք, և այժմ ինքներդ ապրում էք հանգիստ։

Սակայն այս վերջին մեղադրանքը շատ էլ իրաւացի չէր, Աբրահամը հանգիստ ապրելու բաղդից հեռու էր։ Նա իւր հաշիւները դեռ չէր վերջացրել Մա-

ըզօվի հետ, վախենում էր, որ պարտատէրը դատ բանայ Դալբաշեան եղբայրների դէմ։ Դառն յանդիմանում էր Իսրայէլին, որ իրան մոլորեցրեց և գցեց վտանգի մէջ։ Ի՞նչ կար, որ ագահութիւնը կուրացրեց նրանց. գլուխները քաշ բուբլուն քսան կոպէկ փող էին վաստակում։ Այժմ նրանց անունը արատաւորուեց ամբողջ քաղաքում, խայտառակուեցին... Եթէ Մարօզովը դատ բաց անի, կարող է նրանց մինչև անդամ բանդ նստեցնել։

—Դաղարկ բան է, Մարօզովից իսկի՛ մի վախենար,—հանդստացնում էր եղբօրն Իսրայէլը,—Մոսկուան շատ հեռու է այստեղից։ Ոչ ոք ռիսկ չի անի այնտեղից այստեղ գալու ու մեր դէմ դատ սկսելու։ Մոսկուացիները Կովկասցիների խանչալից վախենում են։ Մէկ էլ որ ինչ բան է Մարօզովի համար երեսուն հազարը, որ նրա պատճառով իւր գլուխը դալմաղալի մէջ գցի։

Աւելի ճնշում էր Աբրահամին Բաղդասարի մահը։ Այս յանկարծակի մահը ծանրացել էր նրա սրտի վրայ։ Պատրաստ էր իւր պարտքը հատուցանել հանգուցեալի ընտանիքին լիովին, միայն թէ կարողանար լռեցնել վրդովուած խղճի ձայնը, բայց Իսրայէլը չէր թողնում։

—Էշի վրայ նստելը մի ամսթ, իջնելն-երկու,—կրկնում էր նորամոլ վաճառականը թուրքերէն առածը թուրքերէն լեզուով,—եթէ հիմայ մեր պարտքը տանք Բաղդասարի ընտանիքին լիովին, կասկածողներն էլ կըհաւատան, որ սուտ ենք կոտը ընկել, Մարօզովն էլ մանէթին մանէթ կուզի։ Մի և նոյնն է Բաղդասարը խօմ մեր փողերով յարութիւն չի առնի։ Ո՞վ էր նրան խնդրում մեռնել, ապրէր ինչքան ուզում էր։ Քէֆը տուեց, մեռաւ, Աստուած հոգին լուսաւորի։ Աշխարհ է, եթէ մէկը չընկնի, միւսը չի

բարձրանայ։ Ի՞նչ հարկաւոր էր Բաղդասարին շատ փող։ Նա իսկի փող ծախսելու շնորհք էլ չունէր։ Մի կնիկ ունի, մի հատ էլ որդի, ինչ-որ թողել է, հէրիք է նրանց։ Փողը քեզ ու ինձ է հարկաւոր։ Անուններս խայտառակել պրծել ենք, մի քանի շահի փող յետ չըդցէնք մեր որդիների համար։ Վեր կենանք ու թքածներս յետ լզենք։ Մանէթին քսան, մի կոպէկ էլ աւելի չեմ տայ...

Պակաս չէր դիմադրում Աբրահամին և՛ նրա աւագ որդին, Արշակը։ Այս քսանուերեք տարեկան, նիհար դէմքով, ներս ընկած փորով և զկեռի ձևով դուրս ցցուած կոկորդով երիտասարդն իւր բարոյական կազմով ու աշխարհահայեցողութեամբ Իսրայէլի կատարելատիպն էր աւելի մեծ ախորժակով և աւելի սուր ատամներով։ Ահա ինչու Իսրայէլը սիրում էր նրան որպէս հարազատ որդուն, չէր թագցնում նրանից ոչ մի առևտրական գաղտնիք և միշտ կրկնում էր եղբօր մօտ. «Արշակն ապագայ ունէ»։ Մինչդեռ նոյն սէրը նա չէր տածում դէպի իւր երկրորդ եղբօրորդին, Դանիէլը։ Սրտով բարի, թէև ոչ առերես զգայուն Դանիէլը հասկանում էր, որ իւր հօր ու հօրեղբօր արարքը դատապարտելի է։

Մի օր նա ասաց Արշակին.

—Ես ամօթից կարմրում եմ Վարդանին փողոցներում տեսնելիս։

—Ինչու։

—Ինձ թւում է, որ նրա հօրը մենք սպանեցինք։

—Ցիմար ես, ոչինչ չես հասկանում։

—Հասկանում եմ. հաւատա, ամեն բան հասկանում եմ, որքան էլ ինձանից թագցնէք...

—Թագցնելու բան չըկայ։ Վաճառականներ ենք, ապրանքներս փթթում էր ամբարներում, սնանկացանք։

— Ուստ ես ասում, Արշակ։ Մեր հայրն ու հորեղբայրը շատ ստոր բան են արել։

— Որ լեզուդ փորդ քաշես, վատ չի լինի։

— Հայրիկը վատ մարդ չէ, մեր հորեղբայրն է նրան խելքից հանողը։ Միշտ ասել եմ, էլի պիտի ասեմ. աշխարհում միայն ազնվութեամբ կարելի է բաղդաւոր լինել։

— Օհո, այդ ո՞ր վարժապետն է քեզ այդ դասը տուել։

— Դրա համար վարժապետի դասեր հարկաւոր չեն, բաւական է, որ խիղճ ունենանք։

— Ինչպէս տեսնում եմ, դու իմ դլխին Աստծու պատիժ ես դառնալու։

— Կըդառնամ, Արշակ, եթէ ուրիշների փողերն ուտես։

— Էհ, չենք ուտի, — քաղցած կըմնանք։ Դու վաճառականութիւն չես հասկանում։ Երեխայ չես, բայց յիմար ես ու յիմար էլ կըմնաս։ Մարդ պիտի մօր արգանդից խելօք ծնուի, թէ չէ՝ ուսումն ու խրատը նրան ինչ չօգնեն։ Մինչև անգամ վեց տարեկան Սամուէլը քեզանից աչքաբաց է։ Այ, տես։ Սամուէլ, գոչեց Արշակը իւր կրտսեր եղբօրը։

Վիճաբանութիւնը տեղի ունէր Դալբաշեանների տան առջև ձգուած բաւական մեծ պարտիզում։ Սամուէլն իւր փոքրիկ քրոջ Մարթայի հետ խաղում էր, ձիւնից գնդակներ շինելով ու միմեանց վրայ դարսելով։ Մանուկն իսկոյն վազեց, մօտեցաւ կարմրած այտերով ու կապտած ձեռներով և կանգնեց եղբայրների առջև։

— Սամուէլ դու բազէն ես շատ սիրում թէ հաւը, — հարցրեց Արշակը։

— Բազէն։

— Ինչու։

—Հաւն ինչ է, թռչել չի կարողանում։ Բազէն ծիտ է բռնում։

Արշակը հանեց զրպանից երկու թղթադրամ— մի կեղտոտ ու հնամաշ երեք ռուբլանոց և մի նոր, մաքուր ռուբլանոց։

—Սամուէլ, ո՞ւր ես ուզում,—հարցրեց նա, ցոյց տալով թղթադրամները.

—Այ։ այս եմ ուզում,—խլեց Սամուէլը հնամաշ թղթադրամը։

—Սամուէլ, որ մեծանաս, ինչ պիտի անես։

—Պիտի գնամ Մակարիա, Մոսկով։

—Ինչո՞ւ։

—Ապրանք բերելու, ծախելու, որ փող աշխատեմ։

—Տեսնում ես,—դարձաւ Արշակը Դանիէլին,— վեց տարեկան է, բայց շատ բան է հասկանում։

—Աշակերտ է։

—Այո, ես եմ սովորեցնում նրան։ Քեզ էլ են խրատում, բայց Աստուած քեզ այնքան խելք չի տուել, որ լսածդ ու տեսածդ հասկանաս։ «Ամօթից կարմրում եմ Վարդանին փողոցներում տեսնելիս»։ Բա՞ն ասաց։ Հարցնող լինի. ինքը Վարդանը կըկարմրէր քեզ տեսնելիս, եթէ դու նրա տեղն ու նա քո տեղը լինէիք։ Իսկի՞։ Մատդ բերանը չըդնես, կուլ կըտայ։ Մի քանի անգամ նա եկել է մեր մաղազին, հետը շատ եմ խօսել, գիտեմ ինչ պտուղ է։ Դու տես, նա մեծանայ ինչեր է անելու, քանի քանիսին է չոր տափի վրայ թողնելու։ Վաճառականութիւնը մօր արգանդումն է սովորել։ Դու նրան մի խղճա, քո մասին հոգս արա, ա խեղճ, ա ողորմելի...

XV

Ստեփան Փոքսողեանը իւր զոքանչին խորհուրդ էր տալիս համաձայնուել Դալբաշեանների բուբլուն քսան կոպէկ ստանալու։ Մնանկ վաճառականին շատ էլ պատին սեղմելը լաւ բան չէ։ Մարդիկ մի անգամ արդէն իրանց վարկը կորցրել են. շատ բարկացնես, մի կոպէկ էլ չեն տայ։

Դժբաղդութիւնն այնքան խախտել էր Դիլլիումի հաւատը դէպի մարդիկ, որ նա իւր վեսայի անկեղծութեան մասին անգամ կասկածում էր։ Միակ մարդը, որին կարող էր անպայման հաւատալ, հարազատ եղբայրն էր—Մարտիրոս Հախվերդեանը։ Բայց նա էլ տասնուվեց տարուց աւելի էր բացակայ էր Զիլզիլ քաղաքից, թափառում էր առևտրական գործերով զանազան երկրներում։ Վերջին տարիները նրա նամակները ստացւում էին Անդրկասպեան երկրից։ Այստեղ նա քայլ առ քայլ ուղեկցում էր ռուսաց զօրքերի յաղթական արշաւանքը, մի պատերազմող զընդի մատակարարելով զանազան մթերքներ։

Դիլլիումը Վարդանի ձեռքով գրեց եղբօրը, խընդրելով, որ շուտով գայ ու կարգի բերի հանդուցեալի գործերը։ Մի ամիս անցած, եկաւ Հախվերդեանը։ Քոյրերը հազիւ ճանաչեցին նրան։ Զիլզիլ քաղաքից հեռանալիս Մարտիրոս հազիւ քսան ու մէկ տարեկան երիտասարդ էր, բարակ, նորաբոյս բեղերով, նիհար, թուլակազմ։ Այժմ առողջ, կարմրերես, զուարթ տղամարդ էր արդէն բաւական ճերմակած քոնքերով և ճաղատ գլխով։ Նրա ամբողջ էութիւնից բուրում էր գործնական և ինքնավստահ մարդու այն աշխոյժը, որ ծոյլ և անվստահ մարդկանց ներշնչում է նախանձ.

և ատելութիւն։ Թափառելով երկրից երկիր, պարապելով ամեն տեսակի առևտրական գործերով, շփուելով ամեն տեսակի մարդկանց հետ, կրելով հազար ու մի նեղութիւն, այժմ, երեսունուհոթ տարեկան հասակում, կեանքի փորձիչ բովով անցած մի տղամարդ էր, որին խաբելը դրեթէ անհնարին էր։

Առանց ժամանակ կորցնելու Հախվերդեանը ձեռքըն առաւ քրոջ գործերը, մտաւ Դալբաշեանների հետ բանակցութեան մէջ և իսկոյն հասկացաւ ինչ տեսակի մարդկանց հետ գործ ունի, ուստի շտապեց հաշիւները վերջացնել մանէթին բան կոպէկով։ Այնուհետև խանութի ապրանքները բաւական աջող գնով վաճառեց ուրիշի և հաշիւները բարեխղճաբար ներկայացրեց Գիւլիւմին։

Այս բոլոր գործերի մէջ նրան օգնում էր Վարդանը։ Եւ նա ցոյց տուեց այնպիսի հաշուագիտութիւն ու մտքի արթնութիւն, որ զարմացրեց Հախվերդեանի պէս հմուտ մարդուն։ Բայ, այդ մանուկն ինքն ըստ ինքեան կատարեալ գանձ է։ Կարճ միջոցում փորձուած մարդու ձեռքի տակ կարող է դառնալ հազուագիւտ վաճառական։ Մեղք է նրան թողնել անուշադիր։

—Գիւլիւմ,— դարձաւ մի երեկոյ Հախվերդեանն իւր քրոջը,—թող Վարդանին հետս տանեմ Բագու։

—Ախ, առանց նրա ես կարող եմ ապրել։ Աչքի լոյս մի հատիկ տղայ ունիմ, նրան էլ օտարութիւն ուղարկեմ։ Հերիք չէ, որ դու ինքդ գնացիր օտար երկիրներ, մօրդ թողնելով դառն արտասուքի մէջ։ Խեղճ կնիկը հէնց քո հոգսից մեռաւ։

—Էէ, չէ, իմ հոգսից մեռաւ։ Պատաւեց, մեռաւ էլի։ Այս մայրերն էլ դարմանալի են, տիղի պէս կըպչում են իրանց որդկերանց, պոկ չեն գալիս։

—Քեռի, ինչ լաւ ասացիր, դրուստ սրտիցդ

ձայն տուեցիր,—դոչեց Վարդանը, որի համար մայրը արդէն ձանձրալի էր դարձել։

—Դէ լաւ, հին դարմանը քամուն չրտանք։ Քեզ էլ, Գիւլիւմ, Վարդանի հետ կրտանեմ Բագու։ Վարդանը, փառք Աստծու, յիմար տղայ չէ, մինչև անդամ խելօք է, ինչպէս կարելի է նրան թողնել այս յետ ընկած քաղաքում։ *Սկաժիտ պաժալստա*, ինչ կայ Զիլզիլում, հը՞մ, վոդրաթներ, մեծ մեծ առուտուրներ, թէ հանքեր կամ գործարաններ։ *Նա վամ սկաժու, պառշիվկ զօրօդ*, մարդ էլ չկայ, որի հետ երկու խօսք խօսես քաղաքավարի։ Այ, Բագուն ուրիշ բան է, *մանօ պաշտենիյ*։ Հիմայ ով գլխում մի հաւի չափ խելք ունի, այնտեղ պիտի գնայ։ Հինգ տարի էր չէի տեսել, այս անգամ անցնելիս երեք օր մնացի, լաւ տեսայ, ճանաչեցի։ *Նա վամ սկաժու, զօրօդ պրամիշլեննիյ*. շատ առաջ կրգնայ։ Ես էլ վճռել եմ այնտեղ գործ սկսել։ *Սկակօյ ստատի* կրմնամ Ասխաբաթում։ Էլ այնտեղ *պօյզա* չրկայ։ Աչքիս առաջ ռուսները թուրքմենների չալմաները քամուն տուեցին, պրծաւ, էլ *էքսպեդիս* չրկայ, *արմիան* յետ է դալիս, առուտուրն էլ ընկնում է։ Բագու Բագու, ուրիշ ոչ մի տեղ։ Ուզում եմ այնտեղ մի լաւ մաղազին բաց անել, *սամվ պլնրվիյ սորթ*։ *Ուժէ* մաղազինի տեղն էլ մտքումս նշանակել եմ։ *Պրնամօ* ծովի ափին։

—Քեռի, ինչի մաղազին ես ուզում բաց անել, չիթ ու կտորի,—հետաքրքրուեց Վարդանը։

—Շտո՞, չիթ ու կտորի։ Աստուած մի արասցէ։ *Սկաժիտ պաժալստայ*, չիթ ու կտորի առուտուրումը ինչ աշխատանք կայ։ Երշինին քառորդ կամ շատ շատ կէս կոպէկ։ *Նաշիխայտ, նա վամ սկաժու, նաշիխայտ*։ Մանուֆակտուրան, *ըստանց մնյ*, ծոյլ մարդկանց համար է, որ նստեն ու աբշինով ճանճեր փախցնեն։

— Բաս ո՞ր առուտուրն է լաւ։

— Ո՞ը։ Հէ, ըրատնց մայ, մօղնիյ առուտուրը հիմայ թանգագին խմիչքների և զակուսկաների մաղազինն է, վօտ շտօ...

— Այդ ինչ բան է. բաղկալի դուքան։

— Բաղկալի՞, չէ՞, չախկալի, հա հա հա։ Տի, ըրատնց մայ, նիշնվօ նէ ալանիմայշ։ Իմ ասածն է. «Մաղազին զաստրանամիշնսկիխ տավարօվ ի զազրանըշնիխ նասլիտկով», վօտ շտօ։ Մեծ մաղազին կըլինի, շատ մեծ։ Վիվնսկի երկայնութիւնը կըլինի տասն արշին, լայնութիւնն էլ երկու արշին, տառերը ոսկեզօծ։ Վիվեսկան մաղազինի համար մեծ բան է, ի հարկէ, Ցիվիլիզօվաննի քաղաքում, ոչ թէ այս քարուքանդ Զիլզիլում։ Այստեղ իսկի վիվեսկաներ էլ չըկան, եթէ կան էլ ժնստի կտորներ են կամ հին ալաղնօսներ կամ կոտրած վեղրօյի տակ։ Դռների վրայ կըլինի ուրիշ վիվեսկա, պատկերով, ալանիմա՞եշ։ Պիտի նկարել տամ մի տղամարդ, հաստ փորով. մի ձեռին կալբաս, միւս ձեռին պիվօի բաժակ։ Նեմեցի պատկեր։ Որտեղ եմ տեսել այսպիսի պատկեր։ Զօռտ եվօ զնայնտ, այնքան քաղաքներ եմ տեսել, որ մրտիցս ընկել է։ Հա, Ռոստովում, Ծաղօվիյ փողոցում։

— Մաղազինում ինչ ապրանքներ կըլինեն, քեռի...

— Այնպիսի ապրանքներ, որ տեսնողի բերանի ջուրը գնայ։ Այ, օրինակ, մի կողմում ալօչկաներում դարսած կըլինին շիշեր. կոնեակ, ռում, խերես, վերմուդ, մարսալամի խօսքով զուբրօվկայից ու ըեաբինօվկայից սկսած մինչև շամպանսկիյ։ Հասկացար։ Միւս կողմում. սարդինկա, կիլկի, անչօուս և այլն։ Ցետոյ, զաստօյկի վրայ կըշարենք տապակած գառ, խոզի ճուտ, հնդուհաւ, հորթի միս, տեսակ-տեսակ ձկներ, խաւեարներ, կալբասներ, տեսակ-տեսակ պա-

նիրները—չեստեր, ռոքֆոր, ժերվե և այլն և այլն։ Ցետոյ յատակի վրայ տոպրակներով ու արկղներով չոր պտուղներ, շաքարեղէններ, քաղցր խմորեղէններ։ Այ թէ ինչպիսի մաղազին կունենամ։ Բախկալի դուքան, չէ, չախկալի դուքան, *վօտ Նշշօ*...

—Օրական քանի՞ ռուբլու ապրանք կրծախենք, բեռի,—կամեցաւ իմանալ Վարդանը եռանդուն վաճառականի ապազայ ձեռնարկութեան էականը։

—*Նիլիզա սկազայտ*։ Աջողութիւնից է կախուած։ Իմ ասած մաղազինի պէս մաղազին դեռ չըկայ Բագուում։ *Նշշօ, ըրատնց մոյ, նարոդ նէաբրազովաննիյ*։ Ես մեծ յոյս ունիմ *մարեակների* վրայ։ Մարեակները, *ըրատնց տի մոյ*, ուտել-խմելում ընկերներ չունին։ Նովոբոսսիյսկումն եմ տեսել։ Հէնց այս պատճառով էլ մաղազինս ծովի ափումն եմ բաց անում, որ նրանց աչքի առաջ լինի։ Իմ հաշուով, առաջին տարի *զուրտօմ* օրական ամենաքիչը յիսուն ռուբլու ապրանք կրծախենք։ Ցետոյ, *ըրատնց մոյ, տոբզովլին ռաշիրնցա* կըլինի, կարող ենք հասնել օրական հարիւր, երկու հարիւր ռուբլու, *աղնիմ սլովամ Նիլիզա սկազայտ*...

—Բաս ես գնացի Բագու, մայրիկ,—գոչեց Վարդանը միանդամայն ոգևորուած։

—Մի քանի տարի դու իմ մօտ կը լինես գործակատար, ի հարկէ, ռոճիկով։ Հէնց որ առուտուրը սովորեցիր, *պոլնիյ կամպանիօն* կը շինեմ։ Հօրիցդ մօտ հինգ հազար ռուբլի է մնացել։ Քիչ փող չէ խելօք տղայի ձեռքում։ Այս շաբաթ ես կը գնամ Բագու, մաղազինը կը սարքեմ։ Դու դեռ ուսումդ վերջացրու։ Աշխատիր *ռուսերէն* գրել—կարդալը լաւ սորել, ես առաւել խօսելը։ Օհ, *ըրատնց մոյ*, ռուսերէն լեզուն մեր ժամանակում մի կտոր հաց է։ Հայրս շատ տգէտ էր, չը հասկացաւ այս բանը, ինձ ու-

սում չը տուեց։ Բայց յետոյ, փառք Աստծու, ինքս սովորեցի։ Հիմայ ես խօսելում վարժապետիդ վարժապետից էլ լաւ եմ։ Սամվել ալէրվն սօրթ խօսողներից իմացիր ինձ։ Շատ էլ գազէթ կարդացող եմ, այս էլ իմացիր։ Վաճառականը, որ գազէթ չի կարդում, հէնց մէն ղրուշ։ Ես որ գազէթ չը կարդայի, իսկի կիմանայի, որ ռուսը թուրքմէնի հետ վայնա ունի ու կը գնայի փոդրաթ վերցնելու։ Հա, ես Բագուից քեզ համար կուղարկեմ մի լաւ գիրք։ Այնտեղ ամեն բան կայ վաճառականի համար, կը կարդաս, անպիր կանես...։

XVI

Այդ երեկոյից Վարդանի երազների ու ցնորքների կենդրոնը դարձաւ Բագուն։ Արդէն այդ քաղաքի անհուն հարստութեան վերաբերմամբ նա շատ բան էր լսել և շատ անգամ էր մտածել այնտեղ տեղափոխուելու մասին։ Այժմ երևակայութեամբ ապրում էր այնտեղ և պատկերացնում իւր քեռու մաղազիան և իւր գործունէութիւնը։ Ահա նա, մուշտարիներով շրջապատուած, հազիւ կարողանում է կատարել նրանց պահանջները։ Դրամարկղի մօտ կանգնած է քեռին, ուրախ ու գուարթ և կոտրատում է ռուսերէն։ Հարիւրանոցներ է, որ ստանում է, մանրացնում ու դցում դրամարկղի մէջ։ Երեկոները նրանք հաշիւ են անում օրուայ եկամուտը և միասին ուրախանում։ Վերջապէս, Վարդանը ընկերանում է քեռու հետ և այն և այն...

—Մայրիկ,—դարձաւ նա մի անգամ իւր մօրն երևակայութեան բորբոքուն պահին,—յիշում ես հայրիկն ինձ վրայ ինչ պարտք դրեց։

—Ի՞նչ պարտք։

—Նա ասաց. «դու պէտք է հարստանաս ու Աբրահամ աղայից ու նրա որդիներից վրէժս առնես»։ Ցիշում ես։ Ասաց. «անիծուես, եթէ խօսքս չը կատարես»։

—Ախ, այդ խօսքերը անէծք էին որդի, հայրդ սիրտը ցաւելուց էր ասում։ Մոռացիր...

—Մոռանամ։ Հօրս գրկեցին, սպանեցին, փողերս կլանեցին, ես մոռանամ Աբրահամ աղայի որդիներին։ Ամեն անգամ փողոցում այդ Ազշակին կամ Դանիէլին տեսնելիս, արիւնս գլխովս է տալիս, ուզում եմ քարով նրանց բիթ ու պռունգը ջարդեմ։ Բայց պռոշներս կծելով, ինձ պահում եմ ու ինքս ինձ ասում. «սպասիր, սպասիր, ժամանակը կըգայ»։

—Ախ, որդի, դու վատութիւն անելու մասին ես մտածում։ Այդ լաւ չէ։ Սովորիր մարդկանց լաւութիւն անել, միայն լաւութիւն, թէ չէ ամենքը քեզ կանիծեն։ Դու կարծում ես փողից աւելի հարստութիւն չըկայ։—Կայ։ Լաւ անունը փողից շատ շատ թանգ արժէ, անուն աշխատիր։

—Որ փող ունենամ, անունն էլ ետևից կըգայ։

Այս էր տասն ու չորս տարեկան պատանու դաւանանքը և յանուն այս դաւանանքի, նա պատրաստ էր անել ամեն ինչ։

Շուտով նա Բազուից ստացաւ քեռու խոստացած գիրքը։ Այս ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ առևտրական տարրական կանոնների ու հաշուեգիտութեան ձեռնարկ։ Մի գիրք, որ Վարդանի ժամանակաւոր աւետարանը դարձաւ։ Նա կարդում է և ուսումնասիրում, անգիր անում մուրհակների, պայմանագրերի և առևտրական նամակների օրինակները։

Մի օր նա յայտնեց ընկերներին, թէ շուտով գնալու է Բազու։ Երևաց, որ մենակ ինքը չի եղել Աւետեաց երկրի մասին երազողը, այլ հա-

մարեա թէ բոլոր աշակերտները։

—Դու ինչ պիտի անես այնտեղ,—կէս արհամարհանքով հարցրեց նա Մինասին։

—Պիտի մտնեմ Ռէալական ուսումնարան ուսումը շարունակելու։

—Օհո, զիմնազիա։ Բարեկամ, լաւ կանես, որ հօրդ արհեստը սովորես գլուխդ քաշ։ Արհեստաւորի որդու համար առած ուսումդ էլ շատ շատ է։

—Հայրս էլ այդպէս է ասում,—պատասխանեց հեզ պատանին ամենայն հեզութեամբ—բայց հօրեղբայրս չի թողնում։ Դու տեսել ես հօրեղբօրս։ Չէ։ Վեց տարի է նա Բաղումն է։ Վարժապետութիւն է անում։ Ամեն շաբաթ ես հօրս կողմից նրան նամակ եմ գրում։ Շատ հաւանել է նամակները։ Գրում է հօրս, որ թոյլ տայ ինձ ուսումս շարունակելու։

—Երևի, շատ հարուստ մարդ է,—ծաղրով նկատեց Վարդանը։

—Հարուստ չէ, բայց ինձ շատ է սիրում։ Ինքը պսակուած չէ, ուզում է ինձ որդեգրել։

—Ես էլ եմ գնում Բաղու,—մէջ մտաւ գանգրահեր Լևոնը։

—Քեզ ով է տանում։

—Մենք ընտանիքով ենք գնում։

—Դուք կարծում էք, ես այստեղ կըմնամ,—ասաց քսու Մարտիրոսը, որ ոչ մի բանում չէր ուզում յետ մնալ ընկերներից,—հօրս կաղաչեմ, որ ինձ էլ ուղարկի։

—Պակասը դու էիր,—գոչեց Վարդանը, միանգամայն կատաղելով բոլոր ընկերների դէմ, որոնք, կարծես խօսք մէկ էին արել նրա հացը ձեռքից խլելու։—Մկիչ, մէնակ դու ես մնում այստեղ։

—Իսկի էլ չեմ մնայ,—լրացրեց շարաճճին,—ինչու պիտի մնամ, ձեզանից պակաս եմ, ինչ...

Ցեռոյ ընկերները խօսեցին իրանց ապագայի մասին. իւրաքանչիւրը պարզեց իւր փափագն ու ձգտումները։

Մինասն ասաց, թէ կրկամենար այնքան ուսում առնել, որ իմանար, թէ օրացոյց կազմողներն ինչպէս են դուշակում լուսնի և արեգակի խաւարումը։

Լևոնը խոստովանեց, թէ ցանկանում է ամբողջ աշխարհը ճանապարհորդել և բոլոր լեզուներով խօսել։

Մկիչը փափագ յայտնեց գոնէ մի անգամ գնալ Դաղստան, տեսնել Շամիլի ծննդավայրը և այն տեղերը, ուր նա պատերազմել է։

Մարտիրոսը ջերմ ցանկութիւն արտայայտեց Օկօլոդոշնիյ նաղկիրատել դառնալու։

Մարտին Բաղդանիչը, յիշելով Բաղդասարի նուէրները, մինչև վերջը հաւատարիմ մնաց իւր համակրութեան մէջ և Վարդանին տուեց ընտիր ուսումնասիրտի վկայական։ Շրվշտացրեց և միւս նրա ընկերներին, իւրաքանչիւրին տալով լաւ թուանշաններ։ Վերջին օրը պատկառելի տեսուչը մի խրատական ճառ ասաց ուսումնաւարտներին։

Աշխատեցէք մարդ դառնալ,—աւարտեց նա իւր խօսքը,—որ երեսս պարզ անէք ձեր ծնողների առջև։ Չը մոռանաք Մարտին Բաղդանիչին հա, թէ չէ ձեր բոլորի հէրը կանիծեմ։ Լաւ միտներդ պահեցէք, որ ինչքան էլ մեծ մարդ դառնաք, պատճառն ես եմ։ Ես եմ ձեզ նման աւանակներից մարդ շինել։ Դէ, հայդա, գնացէք, բարի ճանապարհ։ Էհէ, չեղաւ, չեղաւ, կացէք, կացէք... Այ, հէնց իսկոյն ցոյց տուեցիք ձեր էշութիւնը...Հէնց այդպէս, դուզ դուզ գնում էք էլի... Սմի՜ռնով...

—Սմիռնո՛վ,—աղաղակեց Մկիչը,—ադա, կանգնեցէք շարքով։ Այդպէս։ Վերցրէք գլակներդ։ Այդ-

պէս։ Ռաղ, դրվա, տրի, հուռռա՜, կեցցէ Մարտին Բաղդանիչը։ Երեք անդամ...Դէ, բաւական է...

Եւ, կանգնելով տեսչի առջէ, ձեռը զինուորականի ձևով պահեց քոնքի մօտ, շուռ եկաւ և «ռաղ, դվա» ասելով, հեռացաւ։

—Այ չար սատանայ,—գոչեց Մարտին Բաղդանիչը, ծիծաղից թուլանալով։

Մի ամիս անցած Վարդանը գնաց Բաղու։

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

ՎԵՐՋ ԵՒ ՍԿԶԲԻՆ ՄԱՍԻ